ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

Պատվիրատու՝ ՀՀ մշակույթի նախարարությունը, ստորև ներկայացնում է իր կարիքների համար պատմության և մշակույթի անշարժ հուշարձանի ամրակայման, նորոգման և վերականգնման գիտանախագծային ու նախահաշվային փաստաթղթերի մշակման, դրանց համալիր փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված **ՀՀՄՆ-ԲԸԱՇՁԲ-17/42** ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում **2017 թվականի հունիսի 20-ին** կնքված N *«ՀՀՄՆ-ԲԸԱՇՁԲ-17/42-2»* ծածկագրով պայմանագրում **2017 թվականի հոկտեմբերի 18-ին** կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ N 1: Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի սեպտեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեում վերաբաշխում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 29-ի N 1313-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 1254 - Ն որոշմամբ պայմանավորված դադարել է գոյություն ունենալ գնման պահանջը:

Փոփոխության նկարագրություն: Պայմանագրի կողմերը համաձայնագրով համաձայնության են եկել լուծել Պայմանագիրը:

Փոփոխության հիմնավորում: Պայմանագրի 7.3-րդ կետ, ՀՀ կառավարության 2011թ.-ի փետրվարի 10-ի N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 36-րդ կետի 9-րդ ենթակետ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի սեպտեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեում վերաբաշխում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 29-ի N 1313-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 1254 - Ն որոշում:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Ն. Կարապետյանին:

Հեռախոս՝ 011 58-51-78:

Էլ. փոստ՝ cultproject@mail.ru:

Պատվիրատու՝ ՀՀ մշակույթի նախարարություն

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N1

ԳԻՏԱՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՈՒ ՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ, ԴՐԱ ՀԱՄԱԼԻՐ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ N «ՀՀՄՆ-ԲԸԱԾՁԲ-17/42-2» ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան «18» հունիսի 2017 թ.

Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարությունը (այսուհետև՝ Պատվիրատու), ի դեմս նախարարության կանոնադրության հիման վրա գործող աշխատակազմի ղեկավար Ս. Մուրադյանի, մի կողմից, և «ԷԼՄԱ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Է. Առաքելյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, (երկուսը միասին այսուհետ «Կողմեր») կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

1.1. Հիմք ընդունելով կողմերի միջև 2017 թվականի հունիսի 20-ին կնքված պետության կարիքների համար պատմության և մշակույթի հուշարձանի գիտանախագծային ու նախահաշվային փաստաթղթերի մշակման, դրա համալիր փորձաքննության եզրակացության տրամադրման պետական գնման N «ՀՀՄՆ-ԲԸԱԾՁԲ-17/42-2» պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.3-րդ կետը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի սեպտեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեում վերաբաշխում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 29-ի N 1313-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 1254 - Ն որոշումը և առաջնորդվելով ՀՀ կառավարության 2011 թ. փետրվարի 10-ի N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 36-րդ կետի 9-րդ ենթակետով՝ Պատվիրատուն և Կատարողը համաձայնության են եկել լուծել Պայմանագիրը:

2. Համաձայնագրի գործողության ժամկետը

2.1. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից ստորագրվելու պահից:

2.2. Կողմերի միջև ձեռք բերված՝ սույն համաձայնագրին հակասող բոլոր նախկին պայմանավորվածությունները դադարում են գործել սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու պահից:

3. Այլ պայմաններ

3.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու պահից Պայմանագրը համարվում է լուծված:

3.2. Կողմերի պատասխանատվությունը որոշվում է Հայաստանի Հանրապետությունում գործող օրենսդրությանը համապատասխան:

3.3. Սույն համաձայնագիրը կազմված են 2 (երկու) էջից, կնքվում են երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ մշակույթի նախարարություն	«ԷԼՄԱ» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3,	Հասցեն՝ ք.Եղվարդ Երևանյան փող. 1 շենք
Կառավարական շենք N 2,	հեռ.՝ 091 900 601
հեռ.՝ (011) 58-51-78	էլ. հասցեն՝ elma_studio@mail.ru
ՀՎՀՀ 02508054,	ՀՎՀՀ 03315299,
հ/հ 900011013217	հ/հ 220183330616000
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչությունում	
Աշխատակազմի ղեկավար՝	Տնօրեն՝
(ստորագրություն)	(ստորագրություն) Է. Առաքելյան
Կ Տ	Կ Տ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

N02/01.91/4668-17 09 " 08 2017 թ.

«ԷԼՄԱ» ՍՊԸ տնօրեն

պրն Է. Առաքելյանին

Հարգելի պարոն Առաքելյան

ՀՀ մշակույթի նախարարության և Ձեր ընկերության միջև սույն թվականի հունիսի 20-ին կնքված N «ՀՀՄՆ-ԲԸԱՇՁԲ-17/42-2» ծածկագրով պայմանագրով նախատեսված է ՀՀ Շիրակի մարզի Անիպեմզա համայնքի Երերույքի տաճարի (համալիրի կառույցներ) ուսումնասիրման, վթարային հատվածների ամրակայման և մասնակի վերականգնման գիտանախագծային ու նախահաշվային փաստաթղթերի մշակման, դրանց համալիր փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքների կատարումը:

Հայտնում ենք Ձեզ, որ վերոնշյալ հուշարձանը՝ որպես գիտական և գեղարվեստական մեծ արժեք և վաղ միջնադարյան հայկական ճարտարապետության բարձրարժեք նմուշ, հայտնվել է «Եվրոպա Նոստրա» ասոցիացիաների համաեվրոպական ֆեդերացիայի ուշադրության կենտրոնում: Արդյունքում՝ կազմակերպության փորձագետ Պաոլո Վիտտիի կողմից բարեգործական հիմունքներով մշակվել է նշյալ հուշարձանի ամրակայման նախագիծը: Հայ-իտալական միջկառավարական համագործակցության արդյունքում ՀՀ մշակույթի նախարարությունը, բարձր գնահատելով իտալացի գործընկերների կատարածը, պատրաստակամությամբ ընդունել է իտալական կողմի տրամադրած նախագծային փաթեթը, ինչով պայմանավորված՝ դադարել է Ձեզ հետ կնքված պայմանագրով նախատեսված գնման

0010, Երևան, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2, Հեռ./Тел./Tel.: (010, 011) 52 93 49, ֆաքս/факс/fax (374 11) 52 39 22,
0010, Ереван, ул. Вазгена Саргсяна 3, Дом правительства 2, Government House 2, Vazgen Sargsyan str. 3, Yerevan 0010,
էլ-փոստ/Эл.почта/E-mail: info@mincult.am, www.mincult.am

պահանջը:

Գնման գործընթացը սկսելու պահին գործող ՀՀ կառավարության 10.02.2011 թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 36-րդ կետի 9-րդ ենթակետի և Ձեզ հետ կնքված պայմանագրի 7.3-րդ կետի երկրորդ պարբերության համաձայն՝ «պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:»

Վերոգրյալով պայմանավորված՝ ՀՀ մշակույթի նախարարությունը նախաձեռնում է ՀՀ կառավարության համապատասխան որոշմամբ ՀՀ 2017 թվականի պետական բյուջեից նվազեցնել նշված գնման առարկայի համար հատկացված ֆինանսավորումն ամբողջությամբ և խնդրում Ձեր գրավոր համաձայնությունը՝ պայմանագիրը լուծելու վերաբերյալ:

Հարգանքով՝

Աշխատակազմի ղեկավար՝ Ս. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Կատարող՝ Ա. Սողոմոնյան
Հեռ.՝ 011-58-51-78

0010, Երևան, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2, Հեռ./Тел./Tel.: (010, 011) 52 93 49, ֆաքս/факс/fax (374 11) 52 39 22,
0010, Ереван, ул. Вазгена Саргсяна 3, Дом правительства 2, Government House 2, Vazgen Sargsyan str. 3, Yerevan 0010,
Էլ-փոստ/Эл.почта/E-mail: info@mincult.am, www.mincult.am

ՀՀ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ
ՊՐՆ Ս. ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Մուրադյան

Ի պատասխան Ձեր 09.08.2017թ. N 02/01.91/4668-17 գրության հայտնում ենք, որ հաշվի առնելով ՀՀ մշակույթի նախարարության հիմնավորումները՝ «ԷԼՄԱ» ՍՊԸ-ն չի առարկում ՀՀ մշակույթի նախարարության հետ կնքված N ՀՀՄՆ-ԲԸԱԾՁԲ-17/42-2 ծանկագրով պայմանագրի լուծմանը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և հավաստում է, որ «ԷԼՄԱ» ՍՊԸ-ն ՀՀ մշակույթի նախարարության նկատմամբ չունի պայմանագրով սահմանված պարտավորությունների պահանջ՝ կապված ընկերության կողմից կրած վնասների հետ:

Հարգանքով՝

«ԷԼՄԱ» ՍՊԸ ՏՆՕՐԵՆ՝ Է. ԱՌԱՔԵԼՅԱՆ

«ԷԼՄԱ»
"ЭЛМА"
"ELMA"
03315299

կատարող՝ Գրիգորյան Գրիգոր Գրիգորի հեռ. 0 91900601

ՀՀ Գնումների գործակալություն
Մուտք՝ 01/8340-17
«09» 08 2017թ.